

գումար մը, քանզի այդ տղա-
յոյ խրաքանչիւրին հայրը տա-
րեկան 20 ոսկի տնայաճաւ կը
վճարէ, թող որ 40—50 ոսկի
վճարողներ ալ կան:

Լաւ կը յիշեմ, որ գաւառիս
Արքայան Առաջնորդն այս խնդ-
րոյն վրայ ծանրացաւ ժամանա-
կով, սակայն ցաւալի է մտածել
որ բնաւ ուշադրութեան չառ-
նուեցաւ:

Արդ, մինչդեռ մեր դպրոց-
ներուն համար տարեկան հարկեր
եօթնամասուն հազար դրուշի չըն-
չին գումար մը ծախսուելով հան-
դերձայսքան ուսումներ կուտան-
ուին, եթէ այդ օտար դպրոց-
ներու տրուած գումարին կէսն
մեր դպրոցային ծախքին վրայ
բարդուէին, կարելի չէր միթէ
աւելցանել մեր վարժարանաց
մէջ ունեւորներ որ այդ
օտար դպրոցներու մէջ աւանդ-
ուածներէն աւելի բարձր ըլլային:

Դիցուք թէ օտար դպրոց յա-
ճախող աշակերտ մ'երկու երեք
երեքական լեզու և մի քանի
ալ ուրիշ ուսումներ պիտի սոր-
վի (ինչպէս որ յայտնի է և ասիկ
աւելի ոչ ինչ կայ) տարեկան 20
ոսկի վճարելով, եթէ առաջար-
կուի այդ տղուն հօր, թէ միշտ
այդ լեզուներն և ուսումներն մեր
վարժարանաց մէջ պիտի աւան-
դուին նմանօրինակ բանիւրուն
դաստառաց միջոցով, թէ որ
կամ տարին 10 ոսկի վճարել,
միթէ չըփութար իր զաւակն հայ
վարժարան իր կողմէ և տարին ալ
տաւ ոսկոյ չաճ մ'ունենալ:

Ուրեմն, այդ հարկեր դաւա-
կաց հայրերն չպիտի վարանին
10 ոսկի տալ աղգային վարժա-
րանաց իրենց զաւակին կրթու-
թեան ու ուսման համար, և
այսպէս տարին 2,000 ոսկոյ
գումար մը պիտի բարդուի վար-
ժարանաց այժմու ծախսոյ վրայ,
որով հիմնական բարեփոխութիւն
մը պիտի լինի մեր վարժարա-
նաց մէջ:

Խոնարհաբար կառավարիւնք
ուրեմն աղգ. երեսփոխանական
ժողովոյ որ այս կէտն ուշադրու-
թեան առնելով հաճի խորհրդակ-
ցել և հրահրելով այդ հարկեր
աղայոց հայրերն առաջարկէ ա-
նոնց իրենց ծախսած գումարին
կէսն աղգային վարժարանաց
ծախսել և օտար դպրոցաց տը-
ռած ուսմանց կէտը տալ իր
զաւակին:

Եւ ինչու չհաճին այդ հայ-
րերն, քանի որ կէս գումարով
կրկին արդիւնքը ստանանին ա-
պահովուի:

Արդ, մեծ խմբագիր, կ'աղա-
չեմ որ, բարեհաճիք այն դի-
տողութիւնս ի լուր հասարակու-
թեան հրատարակել եթէ արժան
կըղատիք, և յաւելել ձեր կող-
մանէ ալ ձեր լուրջ դիտողու-
թիւններն այս մասին:

Ընդունեցէք հայրն

2 միւլտիմ, 8 Օգոստոս 1883

—o—

Շ Ր Զ Ա Ե Ր Ա Կ Ա Ն

Առ Գաւառական Վարչութիւնս
եւ առ Թաղական Խորհուրդ
մայրաքաղաքիս:

Պատկազրութեանց հրամանա-
գրերու, կոնդակաց և զանազան
չըջաբերական գրութեանց հա-

մար գործածուած Պատրիարքա-
կան կնիքոյ խաղաղութեալ և կեղծ
մէկ օրինակն կ'արեւոյ մէջ ձեռք
բերուած և հաղորդուած է մեզ
Նկատելով որ թերեւս այն
կեղծ կնիքով զանազան թղթեր
կ'ընտած լինին եւ նոր ինքնոյ
խաղաղութիւնք տեղի ունե-
նան, ըստ յանձնարարութեան
Ամեն Ս. Պատրիարք Հօր հարկ
համարեցաք նոյն Պատրիարքա-
կան կնիքը որ 1874 թուականը
կը կրէ, խաղաղ չնկել և նորը
փորագրել տալ, որու մէկ քանի
օրինակներն ինչպէս նաեւ ըն-
ջեալ կնիքոյն և անոր խաղաղա-
կային օրինակներն ընդ գրոյն կը
յղեմք զՁեզ, որպէսզի երբ Պատ-
րիարքական կնիքը կրող այլ եւ
այլ թղթեր և կոնդակներ ներ-
կայայտուին Ձեզ, դիտութիւն
ունենաք բաղդատելու և կեղծն
խակալանէն զանազանելու:

Աւելորդ չիմր համարել յայտ-
նել որ այն կնիքն ներկայ 1883
տարւոյ յուլիս ամսոյ 6էն սկսած
է գործածուիլ:

Մնաց յարգանք

Պատրիարքական Փոխանորդ

ԳԵՈՐԳ Ե. Վ. ՌՈՒՍՏՈՒԿԻՆ

5 Օգոստոս 1883, Կ. Պոլիս

Գ Օ Լ Ի Ր Ա

Օգոստոս 16 օրուան Եգիպ-
տոսի մէջ գոյեցալէն մեռնողնե-
րուն թիւն է 484, որոց 41ը Ա-
լեքսանդրիա, 3ը Գահիլէ, 3ը
Անգիլիական բանակին մէջ, և
մնացեալները այլեայլ տեղեր:

—o—

Ասիական եղբայր գարանի ինի
հսկողութեան ծառայութիւնը
հետեւեալ կերպով պիտի կա-
տարուի՝ Տարածանէլէն մինչև Կա-
զա, նոյնպէս օսմանն Արշիպե-
ղապոսի կողմերուն մէջ:

Ետիւրէն և Պրուսա անուննա-
ւերը յաջորդաբար շրջան պիտի
ընեն Կազայէն Պէրսիէ և անտի
մինչև Հոնգոն: Այս վերջին կըղ-
զին և ասիէ կախումն ունեցող
միւս կողմերուն խորին եղբայր
հսկողութիւնը Սմաքէոյ անուն
թիւնանթիւր նաեւ պիտի ընէ,
որ միանգամայն Հոնգոսի նաւա-
հանգիստին մէջ Սմաքիօնի ծա-
ռայութիւնը պիտի ընէ: Միւս
տեղի-Բէսսան Ալիզոն պիտի հսկէ
Սմաքէոյ, Լէրոս, Բալիմոս, Պաթմոս
և անոնցմէ կախումն
ունեցող կողմերուն խորին:

Սիւրէա Ալիզոն, որ Բիսոսի մէջ
Սմաքիօնի պաշտօնը կը կատա-
րէ, այս կողմին բոլորովը շըր-
ջաններ պիտի ընէ և պիտի հսկէ
նաեւ Իքարիոս, Փաթար և Բիսոսի
բոլորովը գտնուող միւս կողմ-
ները: Նիւսէթ Ալիզոն պիտի
հսկէ Միալիլի, Լէմոս, և անոնց-
մէ կախումն ունեցող միւս կըղ-
զները:

Եալը Քէօզը Ալիզոն Իզմիրի
ծովածոցին մուտքին վրայ պիտի
կենայ, Բրազոմէնի մէջ գարան-
թիւնա չլրացնող ամեն տեսակ
նաւերը Իզմիրի ծոցը մտնելէ
արդիւնքը համար, Բիսսան Ալի-
զոն և կայսերական ծովազօրն
ուրիշ մէկ փոքրիկ չուէնաւը
Տարածանէլի անցքին մէջ սնան-
օնել պիտի ըլլան մարտը բա-
թիւնի չունեցող նաւերը հե-
ռացուելու և զանաք բազմութ
զրկելու համար: Այս միջոցները

կատարելագործելու համար, կայ-
սերական կառավարութիւնը ու-
րիշ չորս նաւ ևս պատրաստած է
Սէլանիկէն մինչև Տարածանէլի
և քաղաքական եղբայր հսկելու հա-
մար: Այս վերջին նաւերը որ
Հիւսէյն պէյի հրամանատարու-
թեան յանձնուած են, ամեն
պարագայի մէջ Սէլանիկի առող-
ջապահական իշխանութեան տը-
ռած հրամանաց համեմատ պիտի
վարուին:

Նոյնպէս հրամաններ տրուե-
ցան օսմանն եղբայր բոլոր ծա-
վային քաղաքաց իշխանութիւն-
ներուն, որպէսզի հասկցեն չա-
զեւաւուց հրամանատարներն, քա-
ղաքը գտնուող իրենց գործա-
կաններուն միջոցաւ, թէ ծանր
կերպով պատասխանատու պիտի
ըլլան այդ հրամանատարը, եթէ
ապացուցուի, որ անպատշաճ
տեղերէ ճանբորդներ բերած ա-
տեն, ոչ-ախտացեալ քաղաքնե-
րու մէջ դուրս հանած են, և
թէ դիտալ կը պարտաւորին,
որ ամեն միջոց ձեռք առնուած է
առողջապահական օրինաց դէմ
դէտիւներն արդիւնքը:

Գ Ր Տ Ա Կ Ա Ն

—o—

(Շարունակութիւն եւ վերջ)

Մէկ խորանարդ մէծ օդին
մէջ գտնուած մանրադիտակա-
ն կենդանիք

Փոքր Ռիզոլի	Մոնսուրի
Աշուն 760	89
440	56
940	57
920	100
Միջին 750	75

Արդ, ասիէ կը հասկցուի թէ
օդը Փարիզու մէջ տան անդամ
սերմունք կը պարունակէ քան
ամբողջանց մոտակայքն: Մի և
նոյն թիւն եղանակաց հետ ալ
կը փախուի: Յիշեալ թիւը ձմեռ-
ուան ատեն տկար է, բայց գար-
նան կ'աւաւելու, ընդհանրապէս
ամառ ատեն բարձր կը մնայ և
անման կը նուազի: Այս թիւն օ-
դին չորութեան և խոնավութեան
նկատմամբ նաեւ փոփոխութիւն-
ներ կը կրէ: Փարիզու մէջ օդին ա-
պակնութեան բարձրագոյն կէ-
տքն ամառ ատեն կը գիտուի,
տարւոյն ամենաչոր եղանակն,
երբ ջրոյ պակասութեան պատ-
ճառաւ փողոցները չեն ուող-
ուիր և փոշին ամեն կողմ կը
տարածուի: Այս ատեն մէկ խո-
րանարդ մեզր օդին մէջ 3,000
մանրադիտակային կենդանիներ
գտած են. յետոյ անձրևը պէտք
է որ օդը մաքրէ: Բայց մինչ
Փարիզու մէջ նոյն իսկ անձրևէ
ետեւ պէտք է որ նկատողութեան
առնուլ տներուն սենեկաց մէջ
պահուած կենդանի սերմերն,
որք ամեն օր ըստ քմոց հովին
պատահաններէն դուրս կը թա-
փին, ուր որ գիւղին մէջ օդն
անձրևով աւելուել ետեւ կը
մաքրուի մինչև որ հովը դայ
նորեն գետնէն այն բարակ և ա-
նօր փոշին բարձրացնէ որ կեն-
դանի սերմերով լի է:

Անցողակի կը յիշեցնենք թէ.
Փարիզու մէջ Մոնսուրիը և Ֆո-
պուր-Մոնսուրը փողոցը, ամառ

ինչպէս նաեւ ձմեռ ատեն կա-
ռաց անցողաբնից գիտար ող-
նայարն ըլլալով «Վոլթէր» լրա-
գրոյն խաղաղիւրներն այնպիսի
միջոցաւ մը մէջ կ'ապրին յա-
րուս միջին հաշուով իրենց շքե-
լած ամեն մէկ խորանարդ մեզր
օդին մէջ 3000 էն մինչև 6000
մանրադիտակային կենդանիք կը
գտնուին:

Այսու ամենայնիւ միւս օր Պ.
Բապթէօրի ախպրան մը, Դի-
տութեանց ձեմարանին մէջ կը
հաստատէր թէ, Փարիզու ան-
տեսանելի սերմերով լի միջոցա-
րին մէջ, աւելի դադարաւոր
կը ըլլի քան թէ մանրադիտա-
կան էակք:

Մոնսուրիի դիտարանին մէջ,
որ ինչպէս ամենուն ծանօթ է,
Փարիզու հարաւակողմն ամբու-
թեանց և 100 մեզր բարձրու-
թեան մէջ կը գտնուի, կատար-
ուած փորձառութիւնք հաւաս-
տի կերպիւ հովին ուղղութեան
միջոցաւ մանրադիտակային հիւ-
լէից թուոյն վրայ ունեցած աղ-
ղեցութիւն կը ցուցնեն: Բովան-
դակ Փարիզն ընդհանրապէս
ամենէն աւելի մանրադիտակային
կենդանի կը պարունակէ, դիւղի
օդն ամենափոքր: Հետեւեալ
տախտակին մէջ յիշեալ իրողու-
թիւնն ակնբեր է:

Մոնսուրիի մէջ հովին ուղղու-
թեան նկատմամբ մէկ խորա-
նարդ մեզր օդին մէջ գտնուող
մանրադիտակային կենդանիքն.

Հիւսիս	124
Հիւսիսային Արեւելք	152
Արեւելք	130
Հարաւային Արեւելք	74
Հարաւ	42
Հարաւային Արեւմուտք	58
Արեւմուտք	77
Հիւսիսային Արեւմուտք	108

Միւս կողմանէ, օդին մէջ հե-
տըզետէ բարձրանալով, դայն
մանրադիտակային կենդանիներէ
զերծ կը գտնենք: Արդ, անցեալ
տարի Ռիզոլի փողոցին, Մոնսու-
րիի և Բանթէոնի մէջ, Պ. Մի-
քէլ շատ մը փորձառութիւններ
կատարելով, միջին հաշուով մէկ
խորանարդ մեզր օդին մէջ ա-
ռաջին կէտին վրայ գետնէն մի-
այն 4 մեզր բարձրութեամբ 462
հատ, Մոնսուրիի մէջ 45 հատ և
Բանթէոնի գագաթան վրայ գետ-
նէն 74 մեզր բարձրութեան մէջ
74 հատ մանրադիտակային կեն-
դանի գտաւ:

Ամեն մարդ գիտէ թէ ինչ
գիւրութեամբ փոշին խուցերուն
մէջ կը թափանցէ և թէ քանի մը
օր բաւական է քաղաքի մը մէջ,
օրինակի աղաղաւ, մարմարինէ
սեղանի մը վրայ, անշոշափելի
բարակ փոշոյ մը գոյութիւնն
ստուգելու: Արդ այս փոշոյն 1
կրամին մէջ 1,300,000 մանրա-
դիտակային կենդանի գտած են:
Այս փորձառութիւնք Փարիզի մէջ
Ռէն փողոցին տան մը երրորդ
դասիկին մէջ կատարուած է:
Մօմօ փողոցին տան մը սենեկին
մէջ կատարուած ուրիշ փորձա-
ռութիւն մը, կարծաւորի մը վը-
րային առնուած մէկ կրամ փոշ-
ւոյն մէջ 2,000,000 մանրադիտա-
կան կենդանի գտնուլ տուած է:

Այս մանրադիտակային կենդա-

նիւններն, անտեսանելի սերմեր,
ձուեր, հատիկներ են: Անոնցմէ
խրաքանչիւրն խիստ թիւթեւ է
և անոնցմէ մէկ միլիոնի ժողո-
ված ուր մը պէտք է միլիոնամ
մը միայն կողմերու համար: Այ-
սու ամենայնիւ անոնք մանրա-
դէտով խիստ լաւ կը տեսնուին:
1500 անգամ մեծցնող մանրա-
դէտ մը զանաք գրէթէ մէկ մի-
լիոնէր տրամագիծ մ'ունեցող
զանգուածի մը ձեւով կը ցուցնէ:

Այս մանր էակներն որչափ որ
փոքր ըլլան, այսու ամենայնիւ
անվնաս չեն, որովհետեւ երբ
մեր չնաւաթեան խոզովակաց
և մարտակային փողին միջոցաւ
զանաք հարկներով ու հա-
ղարներով մեր ներքը կը հիւրըն-
կայենք, անոնցմէ ոմանք Թիֆո-
լան, ոմանք ծաղիլն, ոմանք
սիֆիլիսի և այլն մեզ կը պար-
գեւեն: Հիւանդանոցներուն սը-
րահներուն մէջ է որ յիշեալ սեր-
մերը խիստ առատութեամբ կը
գտնուին: Այսպէս ի Փարիզ երբ
ամենաբազմամարդ փողոցներուն
մէջ մէկ խորանարդ մեզր օդը
3000 կամ 4000 սերմն կը բու-
լանդակէ, հիւանդանոցաց միջ-
նորտան առհասարակ մէկ խորա-
նարդ մեզր մէջ 7—8000 սերմ
կը պարունակէ: Պ. Միքէլ 14
ամսուան փորձառութեամբ, մի-
ջին հաշուով Դիտութեան հիւսն-
դանոցին մէկ խորանարդ մեզր
օդին մէջ 11,000 մանրադիտա-
կան կենդանի գտած է:

Յիշեալ հիւանդանոցին առանձ-
նացեալ հիւանդաց մի սրահին
մէջ Պ. Միքէլ 1881 տարւոյն
դեկտեմբերին ամեն մէկ խորա-
նարդ մեզր օդին մէջ 28,900
մանրադիտակային կենդանի գտած
է:

Այս բաղադրիւն վերլուծու-
թիւնը կ'օգնեն մեզ հասկնալու
թէ ինչպէս ապականեալ տեղ-
եաց մօտակայքն տարափոխի հի-
ւանդութիւնը կը տարածուին(1):

Աստ պարտ է մեզ զկայ առ-
նու և առաւել եւս յառաջ չը-
գիմել, բայց այսու ամենայնիւ
չահաւէտ է ստուգել թէ, մինչ
Հիպոպոքատէն ի վեր բժշկական
կերպերն (մեթոտ) գրէթէ ա-
մուլ չըլնալի մը մէջ կը դառ-
նան, դիտարանաց աշխատու-
թիւնքն են որ այս օրուան օրս
կերպարանափոխութեան մը ըս-
կը իրարմարմարին կը բերեն: Պ
Բապթէօր Տոքթօր չէ ի բժշկու-
թեան: Ինքն է որ նոր շաւիղն
բացաւ և իւր հաշակաւոր փորձ-
առութիւնքն են որ այժմեան
բովանդակ շարժումն կը լուսա-
ւորեն:

Չուրն, միջնորտին պէս վեր-
լուծուեցաւ. Պ. Միքէլ, մէկ լի-
քըր անձրևէի ջրոյն մէջ 64,000,
ի Մօմօրու մէջ 24,800, ի Պէրսի ջրոյն մէջ
24,800, ի Պէրսի Մէն ջրոյն ջը-
րոյն մէջ 4,800,000, յԱնիէր
դարձեալ Մէն դեղայն ջրոյն մէջ
12,800,000, և ի Դիլիշի ականի
մը ջրոյն մէջ 80,000,000(2) ման-
րադիտակային կենդանի գտաւ:

Այս նիւթերս կարգալէն ետեւ
անանի կը բերուի թէ, ասկէ ետք
չպիտի կարենանք ոչ չնչել, ոչ

(1) — Այս դիտողութիւն արժանի
է Կ. Պոլսոյ քաղաքապետութեան և
թաղապետութեանց խորին ուշադ-
րութեան: Կ. Պ.

(2) Միւս մէկ լիւր ջրոյ մէջ:

բնակել և ոչ ալ ուտել: Անտա-
րակոյս պէտք ենք հաստատել
թէ Բրինկէլ հետեւեալ առաջն
ի մէջ բերելու իրաւունք ունե-
ցած է, այն է թէ « օգն աւելի
մարդ կ'ապանէ քան թէ սու-
րը »: Սակայն անկողայ անհուն
փոքրութեան անտեսանելի բա-
նակին առջեւ մեզ դողացնելու
պատճառ մը չէ, բայց դիւրը
քաղաքացի բազմամարդութեան
նախամեծար համարելու և ամեն
պարագայի մէջ առողջ ու հո-
վասուն խուցերու մէջ բնակելու
և մարմնոյն առողջութիւնն մը-
տայ առողջութեան համահաւա-
սար կացուցանելու է:

Թարգ. ՀԵՐՈՆԻՄՍ ԲԱՐՍԵՂԵԱՆ
Մասիս

ԼՈՒՐԵՐ

Վերջին լուրերուն նայելով,
Անգլիոյ Միջերկրականի նաւա-
տորմիչը, որ Բաթրափի նաւա-
հանգիստը կը գտնուի, Բիքէս
պիտի երթայ Նախարարի և ու-
րիշ քանի մը նաւահանգիստներ
հանգիպելէ ետեւ:

— Միացեալ Նահանգացի մէջ
թղթեայ շտաբնաւ մը շինուած է,
որ վեց մէթրոյն աւելի երկայ-
նութիւն ունի և կրնայ պարու-
նակել 25 ճանապարհ և երեք թո-
նո ծանրութեամբ բեռ: Բոլոր-
տիքը 10 հազարամէթր հաս-
տութեամբ խիտ հաստատուն
քարտէզով պատած է:

Այս նոր նաւին քարտիզա-
պատ հաստատութիւնը փորձե-
լու համար, չորս քայլ հեռուէն
բիփովերի քննարկներ պարզուած
են վրան, որք ո՛չ կրցած են
ծակել և ոչ խի աննշան ճեղ-
քուած մը առիթել:

— Դարձեալ Միացեալ Նահան-
գացի մէջ, աշխարհիս ամենէ գէր
մարդ մը մեռեր է: Արտաքոյ կար-
գի մարմնեղ այս մարդը, 243 քի-
լոգրամ ծանրութիւն ունի և զեր:
Քսան և ութ տարեկան հասա-
կին մեռեր է, և շատ տարիներ
է ի վեր թիթիթիտի մը մէջ
գրէթէ ոտքի վրայ կը քնանայ
եղէր: Քնացած միջոցին մե-
ռեր է:

— 0 —

Մ Ա Տ Ա Կ Ա Ս Կ Ա Ր

Աս կողմին անցքերուն վրայով նոր
հասած և Եւրոպական լրագրաց մէջ
տեսնուած լուրերէն հետեւեալները
կը քաղենք:

Յուլիս 14-15 լուսնալու գիշերը,
Հովաները թափալով քաղաքը միտ-
նել փորձեցին զատ զատ խուսի-
րով, սակայն ետ մղուեցան կորուստ
տալով: Շատ մարդ սպաննուեցան
իրենցմէ, բայց կարելի չէ ճշդիւ հաժ-
րել մեռնողներուն թիւը, վասն զի
մեռելին չեն թողուր, միտեղ կառ-
նեն և կը փախչին:

Տրիար նաւուն արգիլուած է ցա-
մաքին հետ հաղորդակցելու:

Երաւ է, որ բոլորական միափոխ-
րաց գլխաւորը Պ. Շառ. ձերբակալ-
ուած է թափալովի մէջ: Ասոր
պատճառը Հովաներու ոտական Բա-
տիար անուն մարդն իր սուրը սր-
հած ըլլալն է, ինչպէս նաև լրտես
ճանչցուող տեղացի վարժապետ մը:
Հովաները քաղաքին դուրսն սպա-
սելով կ'արգիլեն տեղացիներուն և
ուտելիք բերողներուն թափալով
մանկէ:

Թափալովին վնասուող 95 գաղ-
ղիացիք ինքնաբոն հասած են Հովա-

նորու զօրախումբի մը առաջնորդու-
թեամբ:

Հովաներն ալիկ վարուած են ա-
սոնց հետ, և օրը երկու ժամ միայն
քաղցուցած են:

Ինքնաբոն հասնելով Հովաներն ը-
սած են ստանց. « Դուք հիմա գաղ-
ղիացուց նուաճած հողի մը վրայ կը
գտնուիք, ասկէ անդին չենք կրնար
առաջնորդել ձեզիս: Ուստի Պ. Քա-
տիէր միայն ունենալով միափոխար
մը, օգնութիւն խնդրելու եկած են
Թափալով:

Գաղղիական զօրաց գունդ մը զըր-
կուած է անոնց քով, սայլերով միա-
տեղ, որք գաղղիացուց պիտի յանձ-
նուին:

Նոյն ամսոյ 24էն 25 լուսնալու
գիշերը Հովաներու նոր գունդեր
հասան Թափալովէն և ուղեցին եր-
կու հազար գաղղիական զօրքերը
պաշարել: Հարկերի չափ անձինք քա-
ղաքը մտան Հիստակոպէն և շատ
մը մատակարարքի տնակներ կրակի
տուին, ուղեցին նաև կրակի տող
Վիքէր անուն գաղղիացիին տունը:
Բայց քարիւղին հոտն իրենց այս
շարակամութիւնն իմացուելով, տան
բնակիչները դուրս փաղցին, հրա-
ջաններ պարպուեցան ասոնց վրայ:
Վիքէր ձեռքէն և իր աղան ուսէն
փրկուեցան:

ՍԹԱՆԼԷՅ ԶԷՎՈՆՍԻ

ՏՆՏԵՍԱՒԻՏՈՒԹԻՒՆԸ

Ազգերը Բնակչ. և հարստութիւն

Անճնական յատկութիւնն—Աշ-
խատութեան բաժանումին ուրիշ
մէկ օգուտն ալ սա է որ, ար-
ուեստից զանազանութիւնը թոյլ
կուտայ իւրաքանչիւր անձի բնա-
րեւ այն արուեստը որոյ համար
աւելի լաւ յատկութիւն ունի:
Ջօրեղ և քաջաւոր ժողով մը
երկաթագործ կը ըլլայ, նուազ զօ-
րեղ մը՝ նուազ զըրուծիւն պա-
հանջող գործ մը կընէ, կօշիկ կը
կարէ, օրինակի համար, ճարպիկ
մէկը ժամագործ կը ըլլայ, ագե-
տն ու անճարակը կրնան փայտ
կամ քար կարելու աշխատողի:
Իւրաքանչիւր մարդ առհասարակ
կընէ այն արուեստը՝ ուր աւելի
վարձ մը կրնայ ստանալ. յայտ-
նապէս կորուսեալ ճարպիկու-
թիւն մը պիտի ըլլար՝ եթէ ար-
ուեստագէտ մը քար կտարելու
կամ փողոցներն աւելլու զբա-
ղէր:

Ինչքան աշխատութեան բա-
ժանումը տարածուի, այնքան
գործարաններ կը զարգանան,
և այնքան միջոց կը գոյանայ
իւրաքանչիւր անձի իրեն յատուկ
աշխատութիւն մը բնորոշ:

Յաջողակ մարդիկ գործ մը կը
կատարեն, զոր ուրիշ գործերը
չեն կարող կատարել, սակայն
(այս ուրիշները) անոնց ըլլած
այս գործին կը մասնակցին՝ այն
կէտերուն մէջ, ուր յաջողակու-
թեան կարօտութիւն չկայ: Վար-
պետները գործը կ'որոշեն և ար-
ուեստաւորներուն կը բաժնեն,
զբաղըները անտարկները կը-
բաժնեն, օրականները կը վճարեն,
և ստակները կը գանձեն և այլն.
գործարանին տնօրէնը, յաջողակ
և փորձառու հարկու, կրնայ իր
բոլոր ուղադրութիւնը գոհել գոր-
ծէն ուղղելու, աւելի շահաւոր
կողմերը փնտռելու և կատարե-
լա գործութիւններ հնարելու հա-
մար:

Այսպէս անձնիւր ուր զբաղած

է այն կերպով որ իր ձեռքի
գործն աւելի արդիւնաւոր և ա-
ւելի օգտակար ըլլայ այլոց, ու
միանգամայն աւելի շահաւոր ի-
րեն համար:

Տեղական յատկութիւնն—Վեր-
ջապէս աշխատութեան բաժա-
նումը, տեղին յատկութիւն ալ
կ'որոշէ, այսինքն թոյլ կուտայ
որ ամեն գործ կատարուի հոն՝
ուր աւելի յարմար և աւելի շա-
հաւոր պիտի ըլլայ: Արդէն ը-
սած ենք թէ իւրաքանչիւր աշ-
խատութիւն պէտք է աւելի ար-
դիւնաւոր եղած տեղը գործա-
դրուի, սակայն ասի չկրնար ա-
ռանց աշխատութեան բաժանու-
մի ըլլալ: Տեղական յատկու-
թեան շնորհիւն է, որ գաղղիա-
ցիք կը շինեն դիւին, մետաքսը
կամ բարդեան ըսուած նիւթե-
րը, մինչդեռ կը գնեն բամբակը
Մանչէսթըրէն, գործուրը Պիւ-
թօն-օն-թրէնթէն և հանքածու-
խը Նիւ-քասթլէն: Երբ վաճա-
ռականութիւնն ազատ ըլլայ և
աշխատութեան բաժանումը լաւ
հաստատուած, այն ատեն իւրա-
քանչիւր քաղաք, կամ իւրա-
քանչիւր կողմ կուսանի արտա-
դրել հարստութիւն մը աւելի
լաւ կերպով քան ուրիշ քա-
ղաքներ: Ժամացոյցները կը շին-
ուին Քլէրքքնիլէի մէջ, երկա-
թեայ գրիչները՝ Պրիմիկէմի մէջ,
ասեղները՝ Ռիտիլի մէջ, գանակ-
ները՝ Շիֆիլդի մէջ, պնակե-
ղէնները՝ Սթօքի մէջ, ժապա-
ւէնները՝ Քօվէնթրի մէջ, բիւ-
րեղները Սէնթ-Հէլէնսի մէջ, յար-
դէ փեղոյները Լիւթընի մէջ, և
այլն:

Միշտ կարելի չէ ճշդիւ բռնել
թէ, ինչու շատ աւարկաներ
այս ինչ տեղն աւելի լաւ կը շի-
նուին քան թէ այն ինչ տեղը,
օրինակի համար՝ մետաքսը Լիւ-
նի մէջ, բայց յաճախ ասանկ է,
և հարկ է որ ժողովուրդը ա-
զատ ձգուի կարելի եղածին
չափ: Գնել այն ապրանքն զոր
աւելի կը սիրէ: Դիւրութիւնները
կամ հարստութիւնները պէտք
է որ շինուին՝ հաճոյք և օգուտ
հայթայթելու, և ոչ թէ, ինչ-
պէս պիտի տեսնենք, գործա-
ւորներուն աշխատանք հայթայ-
թելու համար:

Այն վայրկեանին ուր վաճառ-
ականութիւնը ազատ ձգուի,
ծնունդ պիտի տայ աշխատու-
թեան բաժանումին ոչ միայն սա
կամ նա քաղաքացի, սա կամ
նա գաւառացի, այլ նաեւ ամե-
նէ հեռաւոր ազգաց մէջ, Այս-
պէս կըտեսնուի այն, զոր կըր-
նանք կօշիկ աշխատութեան երկ-
րային բաժանումը: Ժողովուրդ-
ներու մէջտեղ եղած վաճառա-
կանութիւնը ոչ միայն հարստու-
թիւնը աւելցնելու և աշխատանքը
խնայելու բնորոշ միջոցներէն մե-
կն է, այլ նաեւ կը մօտեցունէ
մեզ այն ժամանակին ուր բոլոր
ազգերը ներդաշնակութեան մէջ
պիտի ապրին, անանկ որ, իրը
թէ մէկ ազգ մը եղած ըլլային:

Քանի մը օրէ ի վեր քաղա-
քին մէջ յունաց նոր Հէրքէլ-
էսին պատկերը կըմարտնչէ մեծ

եւանդով մեծ աշխուժիւ և մեծ
կարեւորութեամբ: Հետաքրքիր
անձերը կըխոսին այդ պատկերը
ծախող խանութներուն առջեւ,
տեսնելու համար ինչ նոր Հէր-
քէլէսն ինչ սքանչելիաւ ոյ-
ժով Հայ բեռնակրին վիզը ա-
նուծն առնելով ոտքերը գետ-
նէն բաժնած է: Մեր համակրա-
լի գրացիները կ'երկի թէ ժողո-
վրեան ռամիկ մասին քսակը
պարպուլու համար եղելութիւն-
ները փոխելու չեն վարանիր:

Պօլոյ ամեն լրագիրք հրատա-
րակեցին կարծեմ, այդ բմ
բիշներուն կայսերական բարձր
ներկայութեան բրած մրցումն ու
այդ մրցման հետեւութիւնը՝ որ
է նոր Հէրքէլէս Բանայի Հայ
բեռնակր Սիմօնէն յաղթուիլը,
եղելութիւնը տակաւին հին չէ,
մէկ քանի ամուսն եղելութիւն
է, և չէր արժէր որ զայն հա-
ռակը նկարէին յայն պատկերա-
հանները, քանի որ այս տեսակ
դէպքեր՝ կրնան երկու եղբայր
ազգաց ռամիկ գաւին մէջ տը-
ղայական վէճեր յարուցանել և
այդ վէճերէն ալ փառակար հե-
տեւանքներ ծագել: Ինչպէս որ
արդէն սկիզբն առած ըլլալը
ստուգեցինք:

Ա. Պ. Պ. Ռ. Ռ.

Անցած գիշեր քեզի բրած այ-
ցելութեանն ատեն, խօսած մի-
ջոյդք քունն եկած ըլլալով չը-
կցայ լաւ հասկնալ բաժնեկր:
Իմացայ որ Արշալոյսի մէջ հրա-
տարակէր ես ինծի բաժնեկր
լրկէ ինծի այդ թիւէն օրինակ
մը և շարքով կը տեսնուինք:

Կ. Ս. ԱՆԹՈՆԻԱՍ

Գ Ր Ա Մ Ա Կ Ա Ն			
	բամիս	թարիֆա	սղճ
Արծաթ մէծիտիւ	23,15	25,05	20
Ոսկի օսմանեան	125,	135,26	107,99
Սթէրլին	137,	148,25	118,36
Ոսկի գաղղիական	109,50	118,49	94,60
Վեցնոց	101,25		
Հինգնոց	61		
Մէթալիք	63,50		
Թղթագրամ	1000		

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Տ Ո Ւ Ն Դ Ա Պ Ա Հ Ո Վ Ո Ւ Թ Ե Ա Ն Յ

Հ Ր Դ Ե Հ Ի
QUEEN
INSURANCE COMPANY
ԹԱԳՈՒՀԻ
Ա.ՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԲՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԼԻՎՐՐՈՒԼԻ ԵՒ ԼՈՆՏՈՆԻ

Դրամադրութիւն 2,000,000 Անգլ. սակի

Այն բնկերութիւնը փոքր Ասիայ գլխաւոր քաղաքացի Բարաբանիոյ
Սուրբայի, Արշալոյսի կողմաց, Բուսէլի և Յունաստանի մէջ ճիւ-
ղեր հաստատած են:

Կնքընտանական Պաշտօնատուն

Յարանկայ թաղ Բուսէլուրի ֆելիտանէն վերի յարկը թիւ 2 և 3

Բնդհանուր գործակալ
ՃՕՆ Ա. Ա. ԿՈՒ

Գ Ր Ա Ս Ն Ե Ա Կ

Բէշտիմալիար պաշի Սէֆէրեան խոն վերի յարկը թիւ 3 ման-
րաման տեղեկութեանց համար պէտք է գիմել բնկերութեան փոխ
գործակալ Յ. Կ. Հիւսնեանի վերոյիշեալ խոնին քով Երանանե-
րուն մաղաղան:

ԱՌ. ՋԵՌԵՆ ԼՈՒՐԵՐ

Ճարան կը կարգայ Բարիկի լրագ-
րաց մէջ, թէ Լա Ֆրանս լրագրին
հիմնադիր Է. Թիրարէնի գլխերը
ոմ չարիս հաղալ ֆրանքի ծախ-
ուած են աճուրդով, և թէ ասոնց
մեծ մասը ծախու առած է յիշեալ
լրագրին տնօրէն Շարլ Լալու — մա-
տը ճակտին գնելով՝ հետեւեալ ծանր
խորհրդածութիւնը կընէ:

— Որքան տխուր եմ եղէր հօս
չպատուիրեալ՝ որ զիս գաղղիացի
լրագրագետ մը քնէր:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պատիւ ունիմ ծանուցանել մե-
ծարգոյ հատարակութեան որ
Queen Թագուհի անուն ապահո-
վութեան բնկերութեան փոխ
գործակալ անուանած ըլլալով
պատրաստ եմ ապահովութեան
բնդունիլ ամեն տեսակ շէնք
ապրանք կարասիք եւն օգտա-
կար պայմաններով:

Մամարման տեղեկութեանց
համար պէտք է գիմել Բէշտի-
մալիար պաշի Սէֆէրեան խա-
նի քով Երանանեան մաղա-
ղան:

Փոխ. գործակալ Queen Բնկ.
ՅԱՎՈՐ Կ. ՀԻՍՆԵԱՆ

— 0 —

ԱՐՇԱԼՈՅՍԸ Զեռքէ կը ծախ-
ուի հետեւեալ տեղերը,
1. Եօ պէտէսթէն, 5.
2. Բէշտի Դատտէսի ծխա-
վաճառ Պ. Արտաշէս Ոսկանեանի
քով:

3. Քարախին վրայ Դարչը-Եա-
գայի նաւամատոցին դէմ: Ժխա-
վաճառ Պ. Կիրակոսին քով:
Հատը 3 մէթալիք:

ԱՐՇԱԼՈՅՍԻ ՏՊԱՐԱՆ

Գ Ր Ա Մ Ա Կ Ա Ն			
	բամիս	թարիֆա	սղճ
Արծաթ մէծիտիւ	23,15	25,05	20
Ոսկի օսմանեան	125,	135,26	107,99
Սթէրլին	137,	148,25	118,36
Ոսկի գաղղիական	109,50	118,49	94,60
Վեցնոց	101,25		
Հինգնոց	61		
Մէթալիք	63,50		
Թղթագրամ	1000		

Հ Ր Դ Ե Հ Ի

QUEEN

INSURANCE COMPANY

ԹԱԳՈՒՀԻ

Ա.ՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԲՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԼԻՎՐՐՈՒԼԻ ԵՒ ԼՈՆՏՈՆԻ

Դրամադրութիւն 2,000,000 Անգլ. սակի

ԾՈՎՈՒ

RELIANCE

MARINE INS. CO. LD.

ԾՈՎԱԹԻՆ

Ա.ՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԲՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԼԻՎՐՐՈՒԼԻ

Դրամադրութիւն 400,000 Անգլ. սակի

Այն բնկերութիւնը փոքր Ասիայ գլխաւոր քաղաքացի Բարաբանիոյ
Սուրբայի, Արշալոյսի կողմաց, Բուսէլի և Յունաստանի մէջ ճիւ-
ղեր հաստատած են:

Կնքընտանական Պաշտօնատուն

Յարանկայ թաղ Բուսէլուրի ֆելիտանէն վերի յարկը թիւ 2 և 3

Բնդհանուր գործակալ
ՃՕՆ Ա. Ա. ԿՈՒ

Գ Ր Ա Ս Ն Ե Ա Կ

Բէշտիմալիար պաշի Սէֆէրեան խոն վերի յարկը թիւ 3 ման-
րաման տեղեկութեանց համար պէտք է գիմել բնկերութեան փոխ
գործակալ Յ. Կ. Հիւսնեանի վերոյիշեալ խոնին քով Երանանե-
րուն մաղաղան: